ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 դեկտեմբերի 2014 թ. N 151 -Ա

2014Թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ 'ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ' ԾՐԱԳՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ' ՊԱՀՊԱՆԵՆՔ ՄԵՐ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ' ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի պահանջներով, 2014թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով 'Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը' ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին ' Պահպանենք մեր ավանդույթները ' միջոցառման կազմակերպման նպատակով՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. 2014թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով 'Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը' ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին նախատեսված միջոցներից 400.0 հազ. դրամ գումարն ուղղել ' Պահպանենք մեր ավանդույթները ' միջոցառման կազմակերպմանը:
2. Հանձնարարել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կ. Նազարյանին ' Պահպանենք մեր ավանդույթները ' միջոցառումը կազմակերպել ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատված ծրագրին համապատասխան:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կ. Նազարյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

ք. Իջևան
02.դեկտեմբերի 2014թ.